



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԱԹԱԹԵՐ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Կրակոցներ ու զոհեր. հետո՞...

Մերձավանի կրակոցները ազդարարեցին, որ մեր երկիրը անվսանգային լրջագույն խնդիրներ ունի մաեւ մերին ճակատի վրա: Փարաբարի ընտրյալ քաղաքադէս **Վոլոդյա Գրիգորյանի** ու կրակոցների դահին նրա մոտ կանգնածներից **Կարեն Աբահաձյանի** սղանոթյունն ու **Արծրուն Գալստյանի** վիրավորումը ոճրային այդ գործողության մաֆիական ձեաքնոթյն ու սառնասիրտ կասարումը փասեցին եւ աղացուցեցին, որ մեր երկրում առկա է բարոյահոգեքանական խորը ճգնաժամ, որն սղառնում է խախեւել համակեցոթյան, քաղաքացիական համերաւ-խոթյան, փոխադարձ հանդուրժողականոթյան բոլոր նորմերը, ինչը, չենք կարող չեւեւել, հոդի է ոթեսական ու հանրային աճրողջ համակարգի խարխւձամբ:

Ամեուտտ, դեռեւա ոթեք է սղասեւ համաղասասխան մարմինների ձեռնարկաճ քննոթյան արդունքներին՝ ողարգելու համար, թե կասարվաճը մեկուսի, անձնամիջյան արա՞ր էր, վեռնդեսա՞, թե քաղաքական հաւվեհարդար: Այդուամենայնիվ, ի հառաջագունե ոթեք է ողասրաս լինել, որ հանրոթյունը չի՝ հավասալու այդ եզրականոթյանը՝ ինչ էլ որ լինի այն: Անվսահոթյան մեճ վիհ կա հանրոթյան եւ իւխանական կառոյցների միջեւ, բոլորի՝ միջեւ, բոլոր մականդակներով, ինչը գրեթե անհնար է դարձնում ոթեսոթյան կայունոթյունը, հեսագա զարգացունը:

Եվ այս ողայմաններում իզուր եւն ԶՊ-ականները, ինչոթեւ սովորոթյունն է իրենց, կասարվաճը «քացասրել» սովորոթենականոթյամբ, այսինքն՝ «Նախկինների ժամանակ ամեն օր էր նման սղանոթյուն կասարվում», այսինքն՝ մեղըր կրկին գցել նախորդների ու նախադեղերի վրա: Առանց անդրադառնալու, որ ռարային քաղաքացին կարող է, օրինակ, հարց սալ. «Իսկ դուք ինչո՞ւ եք եկել. նախորդներին կրկնելո՞ւ համար»:

Հասարակագիտոթյան մեջ ընդունվաճ է ծանր ճգնաժամերը բացասրել հանրային բարոյահոգեքանական վասթար վիճակով, որը երբ հասնում է կուլմինացիոն իր գճին՝ անողայման եեդի է ունենում ողաթյուն: Եվ հասարակագեսները այդ ողաթյունը, ավելի ճիւտ՝ դրա կայճը եեանում եւն ընդամենը անգամ մեկ կրակոցի մեջ, ինչոդիսին էր սերբ ուսանող Պրինցիոդի արձակաճ մեկ գնդակը, որը սկիզբ դարձավ Համաւխարհային առաջին ողասերազմի:

Հետեաքար, ԶՊ անդամներին ու նրանց առաջնորդին ոթեք է խորհուրդ սալ, որ փոխանակ հիււաչարոթյամբ զքաղվելու, քաղաքական հեսաղոնդումներ կազմակերոթելու, եկեղեցականներին հալաճելու, Մայր աթոռը գրավել նկրեւելու, կեղճ մեղադրամքներով դասական գործեր հարուցելու, ընդդիմադիր կամ ընդդիմախոս գործիչներին անիրավ բանսարգելոթյան մասնելու, մարդկանց ինչըր բռնագրավելու, Արարաին «քար նեւելու», մասղաւ սերնդին ազգային դասիարակոթյունից զրկելու, ամեն օր ու ժամ ասելոթյուն հրահրելու, **չաքունջով** եւ ասֆալոսով սղառնալու, Արցախի հանձնումը ոթեսականոթյան հզորացում ոռակելու, ողարոթյունը՝ հաղթանակ եւ սարաճֆային գիջումները՝ ողոթե թեւամու իրավունք ներկայացնելու, եւ, վերջաղես, սսախոսոթյունը ամենօրյա զքաղմունքի վերաճելու ու, դրանցով իսկ, կոսրելու ժողովրդի դիմադրողականոթյունն ու կամըր, փորձեն վերահասսեւել արդարոթյունն ու արդարաղասոթյունը, աւխասեն ներին համերաւխոթյուն, սեր ու հարգամք, հայրենասիրոթյուն, ազգասիրոթյուն եւ, վերջաղես, հայրենասիրոթյուն քարոզելու եւ այդ ողղոթյամբ սքնելու:

Կրակոց ու զոհեր. կրկնոթյունը կկոծանի մեզ, բոլորիս:

ՀԱՄԱԶ ԱՎԵՏԻԲԵՅԱՆ

Օրենքով եւ իրավունքով զքաղվեք

ՄԱՐԻԵՏԱ ԽԱԶՍԻՐՅԱՆ

Մինչ մենք անցաճ մեր հրաղարակման մեջ գրում էինք մեր ժողովրդի գլխին կիրառվող եեխնոլոդիաներից նրան գերճ ողահելու անհրաժեւտոթյունից, հաջորդաճ ռարաթում ոչ միայն լայնորեն կիրառվեցին դրամք, այլեւ Հայասսանի իրական ու վիրսուալ սարաճըր ողարգաղես լցունվաճ էր դրանցով, գումարաճ մաեւ այն սարսափելի դեղերը, երբ Մերձավանում Փարաբարի համայնքաղես **Վոլոդյա Գրիգորյանը** սղանվեց, իսկ Սանկ-Պեերբուրգի Հայասսանի հյուղասոսոթյունում, ըստ ողաւտոնական վարկաճի, ինքնասղանոթյուն գործեց Արցախի նախագահի՝ հասուկ հանձնարարոթյուններով ներկայացուցիչ եղաճ եւ ռաերիս անձնաղես ծանոթ **Բորիս Ավազյանը**: Երկու դեղումն էլ կասարվաճը ցնցել է հանրոթյանը՝ ակամա բոլորիս անողաւտոնոթյան զգացումով համակելով, երբ հարցերը ուրիւ ժամանակների նման լուճվում եւն հաւվեհարդարներով եւ հակաիրավական «ռազբորկաներով»:

Եթե սղանոթյան դեղումն հանրոթյան մեջ սարբեր վարկաճներ կան, նույնիսկ քննարկում եւն՝ ողոքեւսիոնա՞լ է մարդասղանը, ողոքեւսիոնալ չէ, քաղաքական է սղանոթյունը, քաղաքական չէ (Գրիգորյանն ընդդիմադիր «Աղրելու երկիր» կուսակցոթյունից էր), Հայասսանը քաոսի մեջ ներքաւելու փորձ կարող է լինել կասարվաճը եւ այլն, աղա Բորիս Ավազյանի դեղումն սղանոթյան օրը նրա արաճ եեասնյոթից երեւում է, որ Հայասսանի իրավաղահ մարմիններն են ոււացել ինչ-որ ոռուում կայացնել:

⇒2



Կքախվե՞ն Թուրքիան ու Իսրայելը

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագես

Ամերիկացի փողքասթեր **Փասրիկ Բեթ-Պելլիդին** սվաճ հարցազրույցի ժամանակ Իսրայելի վարչաղես **Բենյամին Նեթանյահուն**, արձագամքելով հաղորդավարի՝ Իսրայելի կողմից հայերի ու ասորիների ցեղասղանոթյունը չճանաչելու մասին հարցին, ասել էր. «Կարծում եմ՝ ճանաչել եւնք», հավելելով, թե իբր Զնեսեթն այդ հարցով բանաճեւ է ընդունել: Նեթանյահուն, իրեւ Իսրայելի նախկին վարչաղեսների բացթողումը ռսկելու փորձ ասել էր, որ ինքը հենց այս ողահին ճանաչել է Հայոց ցեղասղանոթյունը: Իսրայելի վարչաղեսի հայսարարոթյանը առաջինը արձագամքեց Անկարան: Թուրքիայի արսափն գործերի նախարարոթյունը հայսարարեց, որ Նեթանյահուի հայսարարոթյունները Գազայի ողասերազմական հանցագործոթյունները թաքցնելու փորձ եւն:

Նեթանյահուի կողմից Հայոց ցեղասղանոթյան ճանաչումը՝ Գազայի ռուրջ ընթացող իրաղար-

ձոթյունների խորաղասկերին, դարձավ լրացուցիչ առիթ՝ Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ հարաբերոթյունները լարվաճոթյան նոր ասիճանի հասցնելու համար: Վերջին ամիսներին թուրք-իսրայելական հարաբերոթյուններն անցնում եւն իրենց փորձոթյունների ամենալուրջ փուլը: Գազայի ողասերազմով ողայմանավորվաճ՝ դիվանագիսական ճգնաժամն այսօր վերաճվել է ռազմավարական մրցակցոթյան, ոռեղ երկու կողմերն էլ բացահայտ խոսում եւն ռազմական բախման հնարավորոթյան մասին:

Վերջին մի քանի եասնամյակների ընթացքում Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ հարաբերոթյուններն ընթացել եւն ռազմավարական համագործակցոթյան եւ գաղափարախոսական լարվաճոթյան բարդ համադրոթյան ողայմաններում, ինչը եւնթարկվել է բազմաթիվ վայրիվերումների:

Այս լարվաճոթյունը վկայում է սարաճաւաջանում ուժային դիմաճիկայի արմասական փոփոխոթյան մասին: Իսրայելը հեւսամոտ է իր հեգեմոնիկ «Մեճ Իսրայել» նախագճի իրականացմանը, իսկ Թուրքիան՝ ինքննսիվ քայլերով իրականաց-

նում է ռազմական արդիականացում՝ զարգացնելով եեղական ողաւտոնական արդյունաբերոթյունը՝ հնարավոր բախման համար հարթակ սեղճելու նողասակով:

Երկու մայրաքաղաքներում էլ փոխադարձ սղառնալիքի ընկալումն ահագնանում է: Իսրայելի ռազմավարական կենսոռնները Թուրքիային ողաւտոնաղես անվանել եւն «ռազմավարական սղառնալիք»՝ ողահանջելով ողասրաս լինել Անկարայի հես հնարավոր ողասերազմի:

Թուրքիայի եեասնկյունից էլ այս սղառնալիքը լուրջ ահազանգ է: **Երդողանը** Նեթանյահուին անվանել է «Մերձավոր Արեւելի ամենամեճ սղառնալիք», իսկ Թուրքիայի արսափն գործերի նախարարոթյունը Իսրայելին բնողազրել է ողոթե սարաճաւաջանային անվսանգոթյան հիմնական սղառնալիք՝ ռջանի երկրների սարաճֆային աճրողջականոթյան դեմ հարձակումների ողասճառով:

Անկարայի եեւլականը Սիրիայի հարցում կայում, միավորվաճ, անկախ, ահաբեկչոթյունից գերճ, բայց Թուրքիայի կողմից կառավարվող ոթեսոթյան սեղճումն է:

⇒3

Սեպտեմբերի 20-ին **Դոնալդ Թրամփը** վերջնագրային դա-
հանքով դիմել է Աֆղանսա-
նի կառավարությանը՝ վերա-
դարձնելու Բագրամի ավիա-
բազան, որը ժամանակավո-
րապես արևմտափրակվել էր
ԱՄՆ-ին եւ հետագայում վե-
րադարձվել Աֆղանստանին։

Թրամփի սարածած հայա-
րարության մեջ նշվում է.

«Եթե Աֆղանստանը Բագ-
րամի ավիաբազան չվերա-
դարձնի դա իրական կառու-
ցադրություն, վաս բաներ տե-
ղի կունենան»։

Բագրամը համարվում է
Աֆղանստանի կարեւորա-
գույն ռազմաբազաներից մե-
կը, որն էական դեր է խաղա-
ցել երկրի վերջին ռազմա-
դաժան զարգացումներում։
Այն զբնակվում է մայրաքաղաք
Զարուլից 12 կիլոմետր հեռա-
վորության վրա եւ, որպես
ռազմական գործողություն-
ների լոգիստիկ կենտրոն, ունի
հասանելիություն հարեւան
երկրների՝ այդ թվում Իրանի
սահմանին։

Ի դեպ, Բագրամի ռազմա-

ԱՄՆ-ին արևմտափրակված սահման Աֆղանստանում



**Բարաք Օբաման եւ Ջամեդ Զարգայը Բագրամի ավիաբազան
վերադարձնելու ժամանակահատվածում 2012 թ.:**

բազան դեռեւս 1950-ական-
ներին կառուցվել է Խորհր-
դային Միության կողմից։ Հե-
տագայում, ըստ 2012 թվակա-
նի մայիսին Աֆղանստանի եւ
ԱՄՆ միջադատված **Համեդ
Զարգայի** ու **Բարաք Օբա-**

մայի ստորագրած Ռազմավա-
րական համագործակցության
մասին համաձայնագրի
(SASPA), բազան արևմտա-
փրակվեց ԱՄՆ-ին, որն
այնտեղ իրականացրեց որո-
շակի շինարարական եւ վե-

րակառուցման աշխատանի-
քներ։

Համաձայն այդ համա-
ձայնագրի, ԱՄՆ-ը իրավունք
ստացավ օգտվելու Աֆղանս-
տանի մի շարք ռազմական օբ-
յեկտներից, այդ թվում՝ Բագ-
րամից։ Սակայն, 2020 թվա-
կանի փետրվարին Դոնալդ
Տրամփը բերված ժամանակա-
վաճառության համաձայն, ԱՄՆ
ռազմական ուժերը դուրս բե-
րվեցին Աֆղանստանից, իսկ
Բագրամի ռազմաբազան վե-
րադարձվեց Աֆղանստանին։

Հետաքրքիր է առա-
ջանում. եթե, օրինակ, Հայաս-
տանը 99 տարի անց առաջար-
կի վերադարձնել TRIP-ը դա
իրական տեղերին, արդյո՞
«վաս բաներ» տեղի կունենան
կառուցադրող երկրի կող-
մից։

Հիշենք մաքուր Դոնալդ
Թրամփի ուղարկած մամակը
ԻԻՀ գերագույն առաջնորդ

այսպիսի **համեմեմիք**, որ-
տեղ մա դաժանաբան էր սկսել
բանակցություններ Իրանի մի-
ջուկային գործունեության
սահմանափակման շուրջ։
Նամակն ավարտվում էր ֆո-
դարկված ստառնալիֆով.
«Զբաղակցելու այլընտրանք
այն է, որ մենք լուրջ է ինչ-որ
բան անենք...»։

Թրամփն իրականում կա-
տարեց իր ստառնալիֆը. Իրան-
իսրայել լուրջաբանի 9-րդ օրը
մա ներգրավվեց ռազմական
գործողությունների մեջ՝ ա-
ջակցելով Իսրայելին եւ հրթի-
ռակոծելով Իրանի միջու-
կային օբյեկտները։

Այս համաժամանակ եմքադ-
րելի է, որ Բագրամի հարցում
եւս Թրամփը կփորձի կատա-
րել իր հայտարարած խոստումը,
եւ Աֆղանստանում, ինչպես
մա նշել է, «ինչ-որ բաներ» տե-
ղի կունենան։

Գ. ԱՄԵՐԵՆԵՐ

⇒ **1** Կամ Հայաստանի
հյուղաստությունում
մա լսել է այնպիսի դասա-
խան, որը նրան մղել է այդ
ֆայլին։ Ու երկու դեպքում էլ օ-
ղում տեսանվում է Հայաստա-
նի իրավադատ մարմինների
ոչ համարժեք դաժանության ու-
ժականը։

Իհարկե՝ ոչ լուրջաբանա-
մակարդակով հանցագործու-
թյան բնույթի վերաբերյալ
վարկածներ ֆնարկելը լուրջ
չէ, ասենք՝ այն, որ ասում են,
որ Գրիգորյանին հազիվ թե
լուրջաբանալը ստանաժ լի-
նի՝ եմքադրաբար Հայաստա-
նում ֆառս հրահրելու համար,
ակամա ծնվում է հարցը. ինչ
է՝ լուրջաբանալները չեն կա-
րող ոչ լուրջաբանալ թվալու
բեմադրություն կազմակեր-
դել, ահաբեկչության տղա-
վորություն բեմադրել։

Առհասարակ՝ աշխարհի
մեծ թաժարները վերջին օրե-
րին կարող էին հանգստանալ՝
Հայաստանում բեմադրու-
թյունների ֆոնին, այդ թվում
կառավարող կուսակցության
7-րդ համաժողովի թաժար-
կանացված մասերի առկա-
յությամբ։

Իրական Հայաստանի ռազ-
մավարություն, հայրենասի-
րության մոդելի որոնում, սո-
ցիալ հոգեբանության փոփո-
խության տեսլական, 3-րդ
համադրության ավարտ ու
4-րդի մեկնարկ՝ նոր Սահմա-
նադրության խոստումով ու էլ
եսիմինչ զարմանազան հնչե-
ցումներ, սրանց միթե՞ կարելի
է լուրջ վերաբերվել՝ համագու-
մարի ողջ թաժարյունությանն ի
տես, «**Հա՛յլ**», «**Ձի՛գ Հա՛յլ**»
դաժով, Սահմալավսկուն
մթնեցնող տեսարաններով։

Այո՛, շատ բան լուրջ է փոխ-
վի Հայաստանում, բայց
հայրենասիրության կայսերա-
կան մոդելը վաղուց ենք մե-
ծել՝ մեր կյանքով, արեւմտյան,
ավելի ազատ բարբեր վաղուց

մեզ մոտ իրողություն են՝ մեր
միգրացիոն կենսակերպի ար-
դյունքում, մեր վատ կյանքի,
մշակական արագադրի՝ ա-
նուամենայնիվ մաքուր դաժան
երակով, ու ոչ թե այն դաս-
ձառով, որ ինչ-որ մեկի ցան-
կությամբ դրանք լուրջ է ներդ-
նել։ Եւ առհասարակ՝ մեր
կենցաղում, բարբերում, մոտե-
ցումներում շատ անընդունելի
բաներ կան, բայց դրանք լուրջ
է փոխվեն ոչ վիճաբանական
մեթոդներով, ինչ-որ մեկի
հրահանգով ու ցանկությամբ,
այլ մեր կրթությանն ու մշա-
կույթին զարկ տալով, տարիե-
րի ֆրանաժան աշխատանքով,
հայեցի մոտեցումները չմե-
ծելով, ազգային արժեքները
դաժողանելով, ու ոչ թե կաս-
կածելի արժեքներ կրողների
հարկադրանքով։ Հազարամյա
անեծքն էլ հայերիս առումով
չի ֆանդվել, որովհետեւ դա
հենց թուրքական աշխարհի
կողմից մեր երկիրը փափուկ
եւ կոտ մեթոդներով ներծծ-
ման, կլանման անեծքն է։
«Ալմա մաժերի» իմաստն էլ
սխալ է ընկալված, դա կրթու-
թյանն է վերաբերում, հասկա-
դես երբ արդարադատության,
ոստիկանական, իրավական
համակարգն է լցունված այդ
սխալ ընկալված (տես՝ ա-
նուն-ազգանուն) սիմվոլի-
կայով։

Բայց մենք շատ լուրջ չենք
ֆնարկի կառավարող կու-
սակցության վերջին համա-
ժողովում հանրայնացված
մեկ հոգու զաղափարախո-
սությունը, մեկ հոգու դաս-
կերացումներով մոտեցումնե-
րը՝ որպես իրական Հայաս-
տանի ռազմավարություն։

Այո, նոր ռազմավարու-
թյան կարիք կա, մեծ լուրջու-
թյունները տանամայակների
հեռահարությամբ են իրենց
ռազմավարությունը մշա-

կում՝ ռազմավարություն մշա-
կող լուրջաբանական կենտրո-
նների օգնությամբ։ Կարեւոր-
ները, Ստեֆանոսները եւ այլ
կենտրոնները տանայակ տարի-
ներով գլուխ են կոտում ռազ-
մավարության մշակման վրա
եւ հետո առաջարկում իրենց
լիդերներին։ Ցույց տվե՛ք, թե
մեր ո՞ր կենտրոններն են ռազ-
մավարություն մշակել Հա-
յաստանի համար, ո՞ր մասնա-
գետներով, ու ես կհասկանամ՝
հավասար այդ ռազմավարու-
թյանը, թե՞ ոչ։ Իսկ մեկ մար-
դու Հայաստանը, մեկ մարդու
ռազմավարությունը չի կարող
ողջ երկիրն ու նրա տարբեր
շերտերին լինել, առավել եւս՝
ձեզիս լինել։ Եթե դրսեւոր չի
դաժարվում հասկադես։

Իսկ մինչեւ այդպիսի ռազ-
մավարության մանրամասն,
ժամանակատար մշակումնե-
րի իրականացումը զբաղվե՛ք
օրենքի եւ իրավունքի դիկտա-
տուրայով՝ բացահայտե՛ք սղա-

նությունները, այս օրերին եւ
ավելի վաղ տեղի ունեցած,
հիշե՛ք, որ ո՛չ Սուրմալուի շու-
կայի դաժարյունի, ո՛չ Ազատ
գլուխի հրդեհի բացա-
հայտումները ոչ մի վստահու-
թյուն չեն ներշնչում հանրու-
թյանը։

Իսկ ԶԴ հռչակագրով նորից
իշխանության մնալու մղա-
տան, իրոք, կարող է իրակա-
նանալ, ֆանի որ Հայաստա-
նում այդպես էլ նոր այլընտ-
րանք չձեւավորվեց ներկա իշ-
խանությանը՝ նրան հարմար
ընդդիմության փոխարեն։

Բայց չլուրջ է մոռանալ, որ
1996 թվականի՝ իր հաղթա-
կան ընտրություններին արդեն
մի տարի հետո իշխանափո-
խություն հաջորդեց, սա շատ
ծանրակշիռ դաս է անցյա-
լից։ Նոր Սահմանադրության
մասին խոսելուց առաջ էլի
հիշողության թարմացում է
լուրջ՝ Սերժ Սարգսյանի
վրայով կարված Սահմանադ-

րությունը ընտրություններից
մի տարի հետո բերեց 2018
թվականի ժողովրդի ցատ-
մանն ու իշխանափոխու-
թյանը։

Մնացյալի՝ խաղաղության
եւ այլն թեմաներով խոսակ-
ցությունն անմուտք է , ու
շատ բան կախված է մեր
կյանքի անմուտք դիմվածնե-
րից, աշխարհափառական
անխոսափելի կատակիզմ-
ներից, անկանխատեսելու-
թյան մեծ չափաբաժնով մի-
ջազգային զարգացումներից՝
որպես անմուտք մշակական
խոսակցության նյութ։ Երրորդ-
չորրորդ հանրադրություններ
բառերը ոչինչ չեն մշակա-
կում, եթե այդ բոլորի տակ
հանրության լայն համախմբ-
մամբ եւ համաձայնությամբ
ներդրված զաղափարախոսու-
թյուն չկա։

Հայաստանի առաջին մա-
խազահի տարասացություն-
ները վկա։

100-ամյակ՝ Կարախա Սուրենյանի



**ԿԱՐՊԵՏ
ՍՈՒՐԵՆՅԱՆ**

**ՕՐԱԳԻՐ. 1943 - 2001
ՀԱՏՈՐ II**

Սեպտեմբերի 23-ի երեկոյան, Խնկո Ադոն ան-
վան մանկական գրադարանի դահլիճում, կազմա-
կերպությամբ Հայաստանի Գրողների միության
վարչության, տեղի ունեցավ մեծատաղանդ գրող,
էսսեիս եւ թարգմանիչ **Կարախա Սուրենյանի**
100-ամյակին նվիրված երեկո, իր տեսակի մեջ՝ ա-
ռաջինը։

Գրողների միության նախագահ **Էդվարդ Միլի-
տոնյանի** ներածական խոսքից հետո, մեծ մշակու-
րականի ու գրողի հրատարակված երկերի համա-
դարձակ վերլուծությամբ հանդես եկավ գրակա-
նագետ-արվեստագետ **Երվանդ Տեր-հաչատրյա-
նը**, այնուհետեւ՝ արձակագիր եւ թարգմանիչ **Գրի-
գոր Զանգիյանը**, գրականագետ **Պետրոս Դեմիր-
ճյանը**, «Ազգ» թերթի խմբագիր **Հակոբ Ավետի-
սյանը**։ Ելույթներն ընդմիջվում էին հորեյլարի
գրքերից տարբեր հասկածների ընթերցմամբ ու
տեսաֆիլմերով։

Վերջում տեղի ունեցավ հյուրասիրություն։

Այս մրցակցությունը մեծ
խնդրի առաջ է կանգնեցնում
ԱՄՆ-ին՝ որովհետեւ երկու երկրնե-
րի դաշնակից, եւ ստիպում
Վաշինգտոնին լուրջ ճնշում
գործադրել Նեթանյահուի վրա
խուճուր ձգնաժամից խուսա-
փելու նպատակով:

**ԱՐԾԿԻ
ԲԱԽՉԻՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ-ՍՏՈԿՀՈԼՄ - Իմ վաղեմի ընկերուհի, լրագրող եւ թարգմանիչ Լաուրա Դաուլն Մինասյանը մարդու այն սե- սակն է, որն առանձնադաս բարձր եմ գնահատում՝ ջերմ, բարեսիրտ, արթնասիկ, բազմամեծակույթ, հազեցած կյան- քով ամրոգ, աշխարհի համ- դեղի բաց, բայց միաժամա- նակ հավատարիմ արմատներին ու հայրենիքին: Նրան եւ ամուս- նուն՝ նշանավոր Կլեոյ ազգա- բան Օֆե Դաուլնին (1936- 2017) առաջին անգամ հան- դիմել եմ 1996-ին, Շվեդիա- յում: Այդ ժամանակ արդեն ինձ հասկալի էր տղայորեց այն փաստը, որ Լաուրան, լինե- լով ռուսերենից եւ հայերենից Կլեոյերեն թարգմանիչ, ֆենի՝ Կամբոջայի լեզվի մասնագետ է: Այդ օրվանից մեծ տարբե- րաբար հանդիմում եմ, հա- կալի երեւանում, որը նա իր տունն է համարում: Հայաստա- նի հանդեպ իր սերը նա փո- խանցել է նաեւ որդիներին՝ Դավիթին եւ Արամին...

-Սիրելի Լաուրա, սարիներ առաջ ձեր կրտսեր որդու խնդրանքով դուք գրի եք առել ձեր կյանքի դասնությունը ձեր որդիների համար: Թեեւ երբեք չեք կարելուրել ձեր ան- ձը եւ գործունեությունը, վա- սահ եմ, որ ձեր հետաքրքա- կան ճակատագիրն արժանի է ուսադրության: Սկսեմք ա- մենասկզբից: Դուք ծնվել եք Բաբվում, մի ֆաղափում, որ- տեղ ժամանակին կար հայ- կական ակնառու ներկայու- թյուն: Ինչպե՞ս եմ հայտնվել ձեր նախնիներն այդ ֆաղա- փում:

-Այո՛, դասաիել է այնպես, որ ես ծնվել եմ այդ ֆաղափում: Այնտեղ եմ հանդիմել ծնող- ներս Հայաստանի երկու տա- րբեր Երջաններից: Հայրս՝ Սեդ- րակ Մինասյանը, ծնվել է Սե- րանի Ծաղկունի գյուղում, 16 տարեկանում ոտով գնացել է Բաբու՝ փնտրելու իր հորը, որը կորել էր 1918-ի Բաբվի հայերի ջարդերի ժամանակ: Մայրս՝ Ա- նահիտ Ոսկանյանը, Ջանգե- գուրի Չափնի գյուղից էր: Նա Բաբու էր եկել գաղտնի երա- գանով՝ դառնալ դերասանու- հի: Այն ժամանակ Բաբվում դեռ գործում էր հայկական թատրոն: Բայց այն փակեցին գրեթե անմիջապես այն բա- մից հետո, երբ մայրս ավարեց թատերական ուսումնարանը եւ աշխատանքի ընդունվեց: Այդ Երջանից ինձ մոտ մնացել եմ միայն նա երկու լուսանկար- ները՝ երկու դերերում: Միտ ու- գում էի իմանալ ավելին նա մասին, հարցեր էի տալիս, բայց մորս համար ծանր էր հիշել այդ Երջանը, առավել եւս՝ խոսել դրա մասին:

-Ինչպե՞ս եք ձեր մանկու- թյունը Բաբվում խորհրդային տարիներին:

-Մեմք ամրում էիմք Մանթա- Եւի տանը՝ ֆաղափի հենց կենտրոնում գտնվող ֆառաիարկ Եւել Եւնում: Այնտեղ ամրում էին տարբեր ազգությունների բազմաթիվ ընտանիքներ: Չնա-

յաժ սուղ տայմաններին ու բնակիչների բազմազանու- թյանը՝ բոլոր բավական խա- դաղ էին ամրում, չեմ հիշում որեւէ հակամարտություն ազ- գային հողի վրա: Վեժերը հիմ- նականում ընտանեկան էին, եւ հարեւանները Եւտայում էին բաժանել հարազատներին: Բո- լորն իրար մասին ամեն ինչ գի- տին: Լվացրը կախվում էր նե- րին բակում, եւ բոլորը գիտին նույնիսկ հարեւանի ներմագ- գեսների գույնը: Հաղորդակե- վում էին սարսափելի ռուսերե- նով՝ յուրաքանչյուրն իր ակն- հայտ Եւտայորթյամբ ու բա- ռերի աղավաղումներով: Բա- կում խաղացող երեխաները երբեք չէին մտածում, թե ինչ ազգության է Թոֆիկը կամ Ռաֆիկը, Մարկը կամ Լյու- դան, Յուրիկը, Ռամիզը կամ Սվետան:

Դորոցում սովորելը ինձ հա- մար ձանձրալի ու անհետաքրքիր էր. ես վաժ էի սովորում: Ամեն ինչ փոխվեց այն օրը, երբ ռու- սաց լեզվի ուսուցչուհին մեզ տարավ գրադարան, եւ գրերի աշխարհն իմ կյանքին մոր ի- մաս սվեց:

Հիշելով դորոցը՝ հանկարծ հայտնաբերեցի, որ ոչ մի աղ- րեջանցի ուսուցիչ չեմք ունե- ցել: Բոլոր դասավանդողները ռուսներ, հրեաներ, հայեր եւ հույներ էին: Ես մտածեցի, որ գուցե դա միայն իմ մեծահա- սակ սերնդին է բնորոշ. կաղ- վեցի զարմկներիս հետ, որոնք Բաբվի դորոցներում սովորել էին 1980-90-ականներին: Նրանք եւս հաստատեցին, որ ե- թե աղրեջանցիներ աշխա- տում էին դորոցներում, աղա կամ սնորհներ էին, կամ հա- վաբարուհիներ, կամ էլ միայն աղրեջաներն էին դա- սավանդում:

-Խորհրդային Բաբվում հա- յերն ինտերնացիոնալիզմի ֆաղափականության, իսկ ա- վելի ճիշտ՝ աղազայնաց- ման հետեւանով, ասիժա- նաբար կորցնում էին ազգա- յին ինքնությունը: Այնուամե- նայնիվ, ձեզ ձգում էր Հա- յաստանը եւ հայ մեակույթը: Ինչպե՞ս եք դա բացատրում:

-Խորհրդային Բաբվում կային մի ֆանի հայաբնակ թաղամա- տեր՝ Եւմենիեմոդը, Ջավոկզալ- նին, Բայլովոն եւ ուրիշներ. ես հիշում եմ միայն այն վայրերը, որտեղ մեր ազգականներն էին ամրում: Բարեկամներս հայե- րեն էին խոսում, հիմնակա- նում՝ Սյունիի բարբառով, այնպես որ այդ լեզուն ես լավ էի հասկանում ու բավական սահուն խոսում էի: Ամառային արձակուրդներն անցկացնում էիմք մեր սիրելի տաիկ Ջոււ- րուքի մոտ՝ հայկական Չափնի գյուղում: Օրերը լեցուն էին, աշխատում էինք կոլտնտեսու- թյունում՝ տաիկի համար աշ- խար վասակելով: Ես եւ զա- րմիկս սիրով արածեցնում էինք գյուղի անասունները. դա Եւտ ազգականի ու հետաքրքիր էր: Տա- փիկը մեզ ուտելի էր տալիս, օր- նում, ու մեմք վազում էինք մոր արկածներ որոնելու: Ամենից Եւտ սիրում էինք կենդանիե- րին մեր հագուստները հագց- նել: Մի Եւտ գեղեցիկ տղաիակ այծիկի բախը չբերեց. նրան հագրեցինք իմ զգեստը, սա-

րեցինք, անվանեցինք Մերիլին Մոնրո եւ բաց թողեցինք: Մյուս այծերը սկսեցին նրանից խու- սափել, միմեւ ու նրան վերա- դարձրին իր այծային տեսին (ծիծաղում է)...

Երբեմն գնում էիմք նաեւ հորս բարեկամների մոտ՝ Սե- րան: Հայրիկս ցույց էր տալիս իր ծննդավայր Ծաղկունիի տունը՝ երդիկով եւ թոնիրով: Դա 50-ա- կանների կեսերին էր, երբ Սե- րանի թերակողմն դեռ կղզի էր, եւ հիշում եմ, թե ինչպես էիմք նավակով հասնում այնտեղ՝ այցելելու Սեւանի վաները: Այդ ամառները, բնականա- բար, կաղեցին ինձ Հայաստա- նին: Այստիսով, իմ մեջ հայ- կականը Եւտ էր դեռ մանկուց, բայց մի տեսակ չգիտակցված, անկանոն ձեով: Եվ դասա- հական չէ, որ դորոցն ավարե- լուց հետո դիմեցի Բրյուսովի անվան օտար լեզուների ինտի- տուս եւ փառավորապես ձա-

րական խմբում: Լեմինգրա- դում գրանցում ունեւալու հա- մար որդես հնոցաղան աշ- խատանի անցա կաթսայա- տանը: Ուսման առաջին տարին Եւտ դժվար էր. գիշերները հե- թաղաիում էի կաթսայատանը, որտեղ ֆնելը վաճաղավոր էր, եւ փորձում էի սովորել: Մեր խմ- բում վեց հոգի էինք՝ երկու տղա եւ չորս աղջիկ: Տղաներից մեկն ուղղոր էր, ես՝ հայ, մնա- ցածները՝ ռուսներ: Մեկ տարի անց աղջիկներից մեկին հե- ռաղին վաժ ուսանելու հա- մար, եւ ես դարձա դաժտուա- կան ուսանող, ինչը աղաիո- վում էր գրանցում, կրթաթուակ եւ հանրակացարան:

Պարզվեց, որ բաժնում ուրիշ հայ ուսանողներ էլ կան: Մեզ հոգ էր տանում հայերի դաս- մաբան Կարեն Յուզբալա- նը, մեմք գնում էինք նա մոտ՝ գրաբար սովորելու: Հետաքրքա- կան է, որ գրաբարի ուսուցման

աշխատանքները նվիրված էին ֆներական հեփաթերին, «Թում Թիւ» դրեմին, իսկ դիմլումային աշխատանքս՝ հնդկական ազգային «Ռամա- յանա» էդուսի ֆներական տա- րբերակի՝ «Ռիամկեի» համե- մատական վերլուծությանը Հարավ-արեւելյան Ասիայի այլ տարբերակների հետ: Այս բարդ տեփուերը հասկանալու հա- ցում ինձ օգնում էր մեր գրա- կանագետ Լոնգ Սիեմը: Իմ կուրսայիններն ու դիմլումայի- նը ֆներական ֆուլկորի մասին ռուսերենով առաջին գիտա- կան փորձերից էին՝ այդ նյութը վերլուծելու եւ դասակարգելու համար: Տարիներ անց իմ դա- սախոս Դմիտրի Ելովկովն ինձ հայտնեց, որ ֆներագետների հա- ջորդ սերունդները Կամբոջայի բանաիյուսություն սովորել եմ իմ աշխատանքներով: Այստի- սով, դրանք իզուր չեն անցել... Համալսարանն ավարեցում

Լաուրա Դաուլն Մինասյան.



հետ ինձ առաջարկում էին մնալ աստիքանտուրայում Լե- մինգրադում, բայց ես որոշեցի վերադառնալ Հայաստան: Կա- րեն Յուզբալանը փորձում էր ինձ հետ դաիել՝ իրավացիորեն հարցնելով. «Աղջի ջան, ի՞նչ ես անելու Եւտանում ֆ ֆնե- րով»: Երբ համոզվեց, որ ինձ հետ դաիելն անհմար է, իր գի- տական կաղերով ինձ աշխա- տանի տեղավորեց ՀԽՍՀ Գի- տությունների ակադեմիայում: Պատեոնաղես ընդունվեցի Ա- րեւելագիտության ինտիտուս որդես ավագ լաբորանտ, բայց փաստացի դիտ աշխատի որ- դես մի Եւտ հարգված ակա- դեմիկոս-դասնաբանի օգնա- կան: Նա, լինելով «Անդրկով- կասի ժողովուրդների բարեկա- մության» մասնագետ, ասի- ձանաբար ներաշեց ինձ իր հերթական հատորի ստեղծման մեջ. սկզբում հանձնարարում էր մեֆեմագրել նյութերը եւ հա- վափել մեջբերումները, աղա դաիանցում էր, որ տեփուերն իմֆ գրեմ: Դա ինձ համար ծանր եւ տաժ էր: Սակայն, օգ- տագործելով իր դիրքն ու հեղի- նակությունը, նա ինձ դարձեց իր գաղտնի Եւտաղորդը, իսկ հեռանալ չէի կարող: Կային նաեւ բազմաթիվ կենցաղային դժվարություններ: Փոֆրիկ աշ- խատարանը հաղիվ էր բավա- կանացնում բնակարանի (ա- վելի ճիշտ՝ սենյակի) վարձը: Միակ միտթարությունն իմ հրաշալի ընկերներն էին՝ մկա- րիչ Կարո Շահմուրադյանը, ֆանդակագործ Ալիս Մելիֆա- նը, երգաիան Վահրամ Թա- փկյանը...

Ավարեցում համար Կամբո- ջայի թեման նեմ, որ տեղա- փոխվելով Շվեդիա՝ փորձեցի աշխատել իմ մասնագիտու- թյամբ՝ որոնելով Կամբոջայի եւ ֆներ լեզվի հետ կաղված աշխատանք: Բացի Շվեդա- կան հեռուստատեսության հա- մար Կամբոջայի մասին մի հին վավերագրական ֆիլմի թարգմանությունից, այլ բան չգտա: 1978-ին ամրիլին Օսլո- յում մասնակցեցի Կամբոջայի իրավիձակի մասին լուսմ- ➤

խողեցի ընդունելության ֆն- նությունները: Բայց մնացի Ե- րեւանում եւ դարձա ռուսալե- զու «Կոմսոմոլեց» թերթի աշ- տահատիֆային թղթակից՝ նյութեր դատատեսելով մայրա- ֆաղափ մեակույթային կյանքի մասին: Որոշ ժամանակ էլ աշ- խատել եմ որդես Գյուղատնե- տական ինտիտուսի «Գյու- դատնես» թերթի ռուսական է- ջի խմբագիր:

-Այնուամենայնիվ, ձեզ գրավում էին հեռու, անհայտ հորիզոնները: Սովորել այն- դիսի հաղվագյուտ լեզու, ինչպիսին է ֆները: Ի՞նչ սվեց մի հայուհու ֆների իմացու- թյունը: Եվ հավանաբար զարմանքը ավելի մեծ էր, երբ, անկախ այդ կրթությունից, դուք որոշեցիք վերա- դառնալ Հայաստան:

-Այո՛, ես մեկնեցի ընդունվե- լու Լեմինգրադի համալսա- րան, բայց ոչ լրագրության, այլ արեւելագիտության բաժնի: Այնտեղ չիմական ամբիոնում բացվել էր Հարավ-արեւելյան Ասիայի լեզուների մոր բաժնի: Զմերի բաժնիը հայտարարել էր ուսանողների ընդունելություն հաջորդ ուսումնական տարվա համար: Միակ բանը, որ կարո- դացա դարգել միմեւ դիմելը, այն էր, որ այդ լեզուն խոսում եմ Կամբոջայի թագավորու- թյունում՝ ինչ-որ տեղ Ասիա- յում: Մեկ միավոր չբավակա- նացրեց, բայց ինձ որդես ա- զատ ունկնդիր ընդունեցին ֆնե-

«Ներին՝ հասուկ ուղարկված լինելով Շվեդական ռադիոյի ռուսական խմբագրության կողմից: Նորությունները Կամբոջայից շատ հազվադեպ էին հասնում, սարածվում էին լուրեր կարմիր ֆներների դաժանությունների, խաղաղ բնակչության զանգվածային սպանությունների մասին: Երեք երիտասարդ ֆներ, որ հրաժարվում էին ինքնապաշտպանությունից, դաժանորեն սպանվում էին Փոլ Փոթի ռեժիսորից, դասնեցին Կամբոջայի սարսափելի իրավիճակի, կարմիր ֆներների ստեղծած համակենտրոնացման ճամբարներում եղի ունեցած դաժան կրքահրկների եւ սպանությունների մասին: Նրանց ցուցմունքները հերքում էին Արեւմուտքում Փոլ Փոթի ներկայացուցիչները, որոնք դաժանություն էին նոր իշխանությունների գործողությունները՝ դրանք անվանելով բարեփոխումներ: Ամենավասն այն էր, որ նրանց աջակցում էին ձախակողմյան շվեդները,

Հայկական, բուրական, շվեդական եւ ռուսական մշակույթների միջեւ

կոմունիստները, մաոիստները՝ հիմնավորելով, որ կարմիր ֆներները կասարել են հեղափոխություն եւ ստեղծում են նոր երկիր՝ նոր կառավարման համակարգով:

Ինձ խորապես հուզեցին բոլոր լսած ժողովուրդները: Կամբոջան վաղուց ինձ համար դարձել էր հարազատ եւ մոտ երկիր: Ուսանողական տարիներից, ուսումնասիրելով այդ երկրի դասնությունը, զարմանում էի, թե որքան մեծ են Կամբոջայի եւ Հայաստանի դասնությունները: Երկուսն էլ հին եւ զարգացած ֆաղափաթություններ են՝ հարուստ ավանդույթներով եւ ճարտարապետական գլուխգործոցներով: Մեծ Հայքը եւ Քմերների կայսրությունը: Երկու ֆաղափաթություններն էլ ունեցել են Ոսկեդար՝ թողնելով հրաշալի ժառանգություն: Երկու երկրներն էլ իրենց աշխարհագրական դիրքի եւ արտադրական ուժերի միջոցով վերադարձել են դասնականության, ավերածություններ, անկախության կորուստ եւ արդյունաբերական արտադրության միջամտություն կառավարման մեջ: Եվ վերջապես, երկու երկրներն էլ ենթարկվել են ցեղասպանության եւ զանգվածային ողբերգությունների, թե՛ Հայաստանում, թե՛ Կամբոջայում ամբողջ սերունդներ են բնաջնջվել:

Ժամանակի ընթացքում իմ ընթանական եւ մասնագիտական կյանքի իրադարձությունները հետ մղեցին ֆները, բայց ես միշտ ազատ ժամանակս օգտագործում էի կամբոջական հեփաթները շվեդերեն թարգմանելու համար: Դրանց մի մասը տպագրվել է տարբեր շվեդական ամսագրերում:

«Եվ այսպես, ձեր կյանքի հաջորդ փուլը, մի բոլորովին ուրիշ աշխարհ՝ Շվեդիան: Խորհրդային տարիներին դժվար էր ամուսնանալ կադրային սպանական երկրի ֆաղափաթում հետ: Ինչպե՞ս արձա-

զանեցին իշխանությունները եւ ձեր հարազատները:

- Իմ հայ «արայազնին» երբեք չհանդիպեցի, փոխաբերելով բոլորովին անտառային, հայսնվեց շվեդը: Մեր դասախանական հանդիպումը ճակատագրական դարձավ, այդ երիտասարդ ինձ համոզում էր մոտ մեկ տարի: Հայաստանից հեռանալ չէի ծրագրել, այդ դասնառնով երկար ժամանակ չէի կարողանում վերջնական որոշում կայացնել: Երբ, այնուամենայնիվ, որոշեցի ամուսնանալ, բոլոր ազգականներս բացասաբար արձագանքեցին: Բա՛վի բարեկամներս ինձ անվանեցին «հայրենիքի դավաճան», իսկ մայրս դարձապես սարսափած էր իմ այդդիսի համարձակ ֆայլից: Ի տարբերություն Բա՛վի՝ Հայաստանում արագադարձում ու ներգաղթերը սովորական բան էին, մարդիկ ավելի հանդուրժող էին: Ավելի դժվար եղավ հորս հետ: Նա

մականում Մերձավոր Արեւելից էին՝ Լիբանանից, Սիրիայից, Իրանից, Թուրքիայից: Համեմատության համար՝ այսօր Շվեդիայի հայկական եկեղեցուն զբաղեցված է 5002 մարդ, բայց ասում են, որ երկրում աղորդող հայերի իրական թիվն առնվազն դրա կրկնակին է:

«Դուք գրուցել եք հայսնի ռուսների հետ Շվեդական ռադիոյի համար...»

-Քանի որ Օսլոյից իմ դասառնած ռեդիոհաժար հետաքրքրությամբ ընդունվեց Շվեդական ռադիոյի ռուսական խմբագրությունում, նրանք առաջարկեցին շարունակել համագործակցությունը: Այդ համագործակցությունը տևեց 13 տարի, խորհրդային տարիներին: Հասցրի դասառնել բազմաթիվ հաղորդումներ Շվեդիայի եւ Սկանդինավիայի մասին ամենատարբեր թեմաներով, որոնք կարող էին հետաքրքրել խորհրդային ունկնդիրներին: Մեր

հյուրերը հիմնականում այլախոհներ կան ԽՍՀՄ «շվեդադարձաններ» էին: Իմ վերջին հարցազրույցներից մեկն **Իոսիֆ Բրոդսկու** հետ էր: Նրան չհանդիպեցի, բայց հաջողվեց կապվել նրա թարգմանչի միջոցով: Բրոդսկին անձամբ զանգահարեց ինձ ռադիոսուդիա, եւ մեմ հրաշալի զրույց ձայնագրեցին:

Կուրյոզային էր անմասշտաբ համարվող **Ռուդոլֆ Նուրեյնի** հետ հարցազրույցս: Գործընկերուհուս հետ եկամք նրա մասնակցությամբ բալետի փորձին: Ինձից տարիքով մեծ, ավելի փորձառու գործընկերը կոկետությամբ մոտեցավ Նուրեյնին եւ ինչ-որ հարց տվեց: Նա կտրուկ ընդհատեց. «Ես ռուս լրագրողների հետ ռուսերեն չեմ խոսում»: Այնուհետեւ վերելից նայելով ինձ՝ ասաց. «Իսկ դուք ռուս չեք, չէ՞»: «Ո՛չ, ես հայ եմ»: Այդ անսառ մարդը միմյնեւ անգամ զվարթացավ. «Ահա՛, ձեզ հետ ես սիրով կզրուցեմ»: Եվ զրուցեց:

«Պերեստրոյկայի» շրջանում ԽՍՀՄ-ից սկսեցին գալ եւ այլեւս առանց վախ մեզ հետ զրուցել այնպիսի ճշմարտություններ, ինչպիսիք էին **Ալեքսանդր Սոկուրովը, Յուրի Իլյենկոն, Ռոլան Բիկովը, Թեմիզ Լեւոնյանը, Սերգեյ Սոլովյովը** եւ այլք:

«Անդրեյ Տարկովսկու օրագրերում Սերգեյ Փարաջանովի առնչությամբ հիշատակվում է Լ. Միկայելանի, այսինքն՝ ձեր անունը (թեղե՞ք առաջադիվ): Կոլոսովն է՞ր այդ դրվագի մասին ես:

-1981-ի ապրիլին **Անդրեյ Տարկովսկին** շվեդ կինեմատոգրաֆիստների իրավերով ժամանեց Շվեդիա: Իմ շվեդ գործընկերը հեռուստատեսությունից խնդրեց ինձ մասնակցել հարցազրույցին և օգնել ռուսերեն թարգմանության հարցում: Նկարահանման վայր գնալիս ես հարցրի Տարկովսկուն, թե ի՞նչ գիտի Փարաջանովի վի-

ճակի մասին: Հարցազրույցի ձայնագրությունից հետո Տարկովսկին անսպասելիորեն կանգնեցրեց ինձ, հարցրեց՝ հայուհի՞ եմ արդյոք, եւ եռանդով ասաց, որ Փարաջանովին լիք է փրկել, որ նրան դանդաղ ստանում են՝ թույլ չհալով աշխատել: Նա խնդրեց, անգամ դադարեց, որ ինչ-որ բան անեմ ԽՍՀՄ-ից նրա արագադարձ կազմակերպելու համար, միգրացիոն հայկական կազմակերպությունների միջոցով: Իհարկե, ես խոստացա անել հնարավորը: Նա խնդրեց զանգահարել իրեն հյուրամոց եւ թելադրեց լիքվալի իր ընկերոջ տվյալները, որի հետ կարող էի կապ հաստատել ու համագործակցել այս հարցում: Տարկովսկու օրագրում հենց այս մասին էր գրառումը:

Փարիզի՝ արվեստագետների իրավունքների դասառնության միջազգային կազմակերպությունից դասառնանեցին, որ ըստ իրենց ունեցած վստահելի տեղեկությունների՝ Փարաջանովը չի ցանկանում լքել ԽՍՀՄ-ը... Ի վերջո որոշեցի, որ միակ ճիշտ ճանապարհը Թբիլիսի գնալն է՝ անձամբ հանդիպել Փարաջանովին եւ տեղում դարձել իրավիճակը: Նույն տարվա օգոստոսին ես հնգամյա որդուս հետ մեկնեցի Երևան, աղա ավտոբուսով՝ Թբիլիսի: Այդ ժամանակ վստահավոր էր նման բան անել արտասահմանյան անձնագրերով, առանց վիզաների, բայց հույս ունեի, որ այդ ավտոբուսներում փաստաթղթերը չեն ստուգի: Ամեն ինչ բարեհաջող անցավ: Հասանք Փարաջանովի տուն, եւ բացատրեցի այցիս դասառնը: Նա հաստատեց, որ դասառն է անմիջապես մեկնել ԽՍՀՄ-ից, միայն թե իրեն թույլ տան: Բայց երբ դասառնվում էի հեռանալ, Փարաջանովն ասաց, որ չի թողնի գնալ, որ մեմ այժմ իր հյուրերն են: Նա տրամադրեց իր սենյակը եւ նույնիսկ մահճակալը: Այդպես անցկացրինք երկու զարմանալի օր՝ լի արկածներով եւ հանդիպումներով նրա բազմաթիվ հետաքրքիր հյուրերի հետ:

Փարաջանովին հանդիպելուց առաջ ես նրա մասին տարբեր բաներ էի լսել, որ նա արտակենսոյն է, էդասաժային, երբեմն՝ կոմիս եւ անկանխատեսելի: Բայց մեմ հանդիպեցինք անսահման բարի, ուշադիր, զվարթ ու խոսող աչքերով մի մարդու: Գուցե նա ավելի մեղմ էր երեխայի ներկայության դասառնով: Նրանք անմիջապես ընկերացան, Դավիթը շատ կապվեց Փարաջանովի հետ, միասին զվարճանում էին: Իմ եւ որդուս մեջ մնացին շատ ջերմ հիշողություններ այդ զարմանալի տոնական մարդուց, որին Դավիթը կոչեց Հրաշագործ:

«Ավելի քան 35 տարի դուք եղել եք հայսնի շվեդ ազգագրագետ Օֆե Դաունի կինը, որին երբեմն անվանում են «շվեդական բնավորության գուրու»: Ձեր շնորհիվ նա զբաղվեց նաեւ հայկական հարցով, դա՛նք Հայոց ցեղասպանության ճանաչման համար Շվեդիայում,

զրեց հոգվածներ հայերի ու ցեղասպանության մասին, ինչի համար երկուսիդ՝ մեծ շնորհակալություն:

-Օֆե Դաունը իսկապես մեծ ներդրում ունեցավ Շվեդիայի ժամանակակից ազգագրության զարգացման գործում: Հայսնի է նրա «Շվեդական մտածելակերպը» մենագրությունը, որը թարգմանվել է տարբեր լեզուներով: Գիրքը կա նաեւ հայերեն՝ Ալեքսան Բախչինյանի հիմնալի թարգմանությամբ: Բոլոր թարգմանություններից նրան հասկալիք թանկ էր հենց այս հայերեն տարբերակը: Երբ նա առաջին անգամ ստացավ իր գրքի հայերեն օրինակը, անգամ աչքերը լցվեցին: Օֆե ուսումնասիրում էր Հայաստանի դասնությունը, հասկալիքս Հայոց ցեղասպանությունը եւ աշխատում էր Շվեդիայում Եղեռնի ճանաչման համար: Նա հոգվածներ էր գրում շվեդական մամուլում, մասնակցում բանավեճերի: Նույնիսկ այդ նպատակով ստեղծեց շվեդա-հայերի աշխատանքային խումբ: 2010-ի մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանը (Ռիկսդագը) ընդունեց բանաձեւ, որը ճանաչեց 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածները որպես ցեղասպանություն: Դա շատ դրամաշիկ փեարկություն էր: Մեմ այնտեղ էիմ եւ ականատես եղանք ողջ գործընթացին: Որոշումն ընդունվեց մեկ ձայնի տարբերությամբ՝ 131 դասառնավոր կողմ էին, 130-ը՝ դեմ, 88-ը չմասնակցեց փեարկությանը: Այս որոշմանը կտրուկ արձագանքեց Թուրքիան: Անկարան հետ կանչեց իր դեսպանին Սոկիոլմից եւ չեղարկեց վարչապետ **Երդոհան** նախատեսված այցը Շվեդիա: Վախկոտ շվեդական կառավարությունը, զգուշանալով Թուրքիայի հետ հարաբերությունների վասթարացումից, հրաժարվեց դասնոնալիքս՝ կառավարական մակարդակով ճանաչել սեփական խորհրդարանի որոշումը՝ ցեղասպանությունն անվանել ցեղասպանություն:

«Թեեւ արդեն կես դար է, ինչ աղորում եք արտասահմանում եւ մեծապես ինտեգրվել եք եվրոպական հանրությանը, ի տարբերություն բազմաթիվ սփյուռքահայերի, դուք դարձել եք Հայաստանի ֆաղափաթի, զրեթե ամեն տարի գալիս եք հայրենիք եւ ամեն օր հետեւում եք այստեղի իրադարձություններին: Հա՞տերի համար զուցե անընկալելի է այսպիսի կաղը հայրենիքի հետ:

Չմայած հետաքրքրական ու հագեցած կյանքին՝ այս ամբողջ ժամանակ ես աղորում էի Հայաստանի հանդեպ կարոտով: Ավագ որդիս, որը մանկուց ինձ հետ այցելում էր Հայաստան մեր ամենամյա ուղեւորությունների ընթացքում, մի անգամ ասաց. «Մա՛մ, դու նման ես այն տնկիին, որին տեղափոխել են օտար հող, որտեղ նա արմատներ գցել չի կարողանում...»: Երեւի նա ճիշտ է...

Կենսազագային կայանք. այսօրն ու վաղը

Առօրինակում գործում է մոտ 50 միլիոն կենսազագի կայան, հիմնականում փոքր, որոնք օգտագործվում են կենսազագ արտադրելու համար՝ սարքեր օգտակար թափոններից, ինչպիսիք են գոմաղբը, սննդի թափոնները կամ կեղծազրերը: Նման կայանների ամենամեծ թիվը կենտրոնացած է Չինաստանում և Հնդկաստանում: Այնուհետև կենսազագը կարող է օգտագործվել խոհարարության, ջեռուցման և էլեկտրաէներգիա արտադրելու համար: Չինաստանը և Հնդկաստանը առաջատարներ են փոքր բիոգազի կայանների ֆանակով: Համեմայն դեղս առօրինակի բիոգազի արտադրության հզորության ավելի քան 60%-ը զբաղվում է Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում:

Կենսազագի կայանների զարգացման զգալի ներուժ կա Հարավային Ամերիկայում, Ասիայում և Աֆրիկայում: Շատ երկրներ, ինչպիսիք են Վիետնամը և Նեդերլանդները, աջակցում են բիոգազի կայանների զարգացմանը ազգային մակարդակով:

Կենսազագը արտադրվում է օրգանական թափոնների լայն շրջանակից, ներառյալ կենդանիների գոմաղբը, ֆաղափային թափոնները, բուսական մյուսթերը, սննդի մնացորդները և կեղծազրերը: Կենսազագը կարող է օգտագործվել էլեկտրաէներգիա, ջերմություն արտադրելու համար:



լու, ինչպես նաև խոհարարության և լուսավորության համար:

Կենսազագը վերականգնվող է մաքուր էներգիայի աղբյուր է, որը մվազեցնում է ջերմոցային գազերի արձանեցումները: Կենսազագի արտադրությունը բախվում է թափոնների հավաքման լոգիստիկայի և ենթակառուցվածքների հետ կապված մարահրավերների, սակայն դրա օգտագործման հեռանկարները մնում են բարձր:

Կենսազագի տեխնոլոգիաները բավականին արագ զարգանում են, հասկալով լավ զարգացած գյուղատնտեսությունում ունեցող երկրներում: «Միջազգային կենսաէներգիա» ամսագիրը հետաքրքիր է կատարել: Նրա խոսքով՝ կենսազագի ներուժի 86%-ը դարձնելով է գյուղատնտեսական հումքում և միայն 8%-ը՝ արդյունաբերական և ֆաղափային թափոններում: Հետևաբար, վերջերս գյուղատնտեսական արտադրության օրգանական թափոններից է գյուղատնտեսական էներգետիկ մշակաբույսերից կենսազագի արտադրությունը սկսել է զարգանալ ավելի արագ տեմպերով:

Այսօր Գերմանիան Եվրոպայում առաջին տեղն է զբաղեցրել, ինչպես նաև երկրներում: Սկանդինավյան երկրները ակտիվորեն ներդրում են բիոգազի կայաններ: Շվեդիայում արդեն գործում է ավելի քան 200 կայան, որոնցից 138-ը զբաղվում են ջրամաքման կայաններում, 60-ը՝ աղբավայրերում, իսկ Դանիայում ամենամեծ թիվը կայաններ են գործում անասնադառնական ֆերմաներում:

Առօրինակի ամենամեծ կենսազագի գործարաններից մեկն է Նեդերլանդներում գտնվող մեկը՝ Լյաոնին ֆաղափի մոտակայքում: Այստեղ է զբաղվում առօրինակի ամենամեծ կաթնամթերքի ֆերման՝ 60 հազար կովով: Տեղադրվել է 5.6 ՄՎտ հզորությամբ բիոգազի կայան, որը միացված է էլեկտրաշահմանի: Ֆերմայում անասնաբույսերի գլխաքանակը միայն 250 հազար գլխի, և համադաստիանաբար կրնալայնվեն բիոգազի արտադրության հզորությունները: Մեկ տոննա անասնաբույսից ստացվում է 50-65 մա կենսազագ՝ 60% մեթանի դարձնակությամբ, 150-500 մա կենսազագ՝ սարքեր տեսակի բույսերից՝ մինչև 70% մեթանի դարձնակությամբ:

Մեր երկրում նույնպես անհրաժեշտ է մտածել կենսազագի արդյունավետ օգտագործման մասին:

ՍՏԵՓԸՆ ՊԱՊԻԿՅԱՆ,
Հայկական էներգետիկական
ակադեմիայի հիմնադիր
նախագահ



Սեպտեմբերի 23-ին Թեմիայան Կենտրոնի ցուցասրահում տեղի ունեցավ «Փոխադարձ կապեր՝ հայր և դուստր Ֆարիդանիներ» ցուցահանդեսի բացման արարողությունը: Ելույթ ունեցան

ցուցահանդեսի համադրող Անահիտ Կորյունը, ՀՀ-ում Իրանի Իսլամական Համադրության դեսպանատան Մշակույթի կենտրոնի տնօրեն Մոհամմադ Ասադի Մովահեդը և Նիկոլ Ֆարիդանիի

«Փոխադարձ կապեր՝ հայր և դուստր Ֆարիդանիներ» ցուցահանդես

դուստր՝ Կասրին Ֆարիդանին:

Նիկոլ Ֆարիդանին (1936-2008), հայկական ծագումով, Իրանի արդի լուսանկարչության ակադեմիայի դեմոստրացիայի 20-րդ դարի երկրորդ կեսից: Նա որդես լուսանկարիչ, միաժամանակ ստեղծագործել է լուսանկարչության մի ֆանի դուրսերում: Մոտ քսան տարի առօրինակով Իրան-Իսլամական պայմաններում, մասնագիտացել է երկրաբանական լուսանկարչության, ֆոտոմիկրոգրաֆիայի և օդանկարչության բնագավառներում՝ օդում անցկացնելով երեք հարյուր ժամ՝ դարձել է Իրանում լուսանկարչության վերածնալ ժամերի հիմնադիրը: Հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում Ֆարիդանին մա-

ն ալկիվ ճանփորդել է Իրանով մեկ: Հռչակվել է որդես «անադաշի լուսանկարիչ»:

Հիսուն տարի շարքում Իրանի մահանգներով՝ լուսանկարիչը ստեղծել է ավելի քան 60.000 ժաղապներ, որոնցից 8000-9000 վերաբերում է Իրանահայությանը՝ բնակավայրերին, որոնց մեծ մասն այլևս դատնություն է դարձել:

Նիկոլ Ֆարիդանիի ստեղծագործության հիմնական թեման Իրանն է՝ իր բնության, դատնության և մշակութային հուշարձաններով, ինչպես նաև իրանցիները՝ իրենց հազարավոր տարիների ավանդույթներով ու սովորություններով: Ներկա ցուցահանդեսում առկա են վերածնալ թեմաներով իրականացված ֆարիդանիական հանրահայտ սեւ ու սոխակ լուսանկարները, որոնք հիմնականում ստեղծվել են լուսանկարչի ստեղծագործական գործունեության վաղ շրջանում՝ 1955-1975 թթ:

Կասրին Ֆարիդանին՝ Նիկոլ Ֆարիդանիի դուստրը, աղում է ստեղծագործում է Կանադայում: Մասնագիտական երկու կրթություն ունի: Իր ստեղծագործություններում նա անդրադառնում է սոցիալ-հասարակական խնդիրներին: Մասնագիտանալով վավերագրական լուսանկարչության մեջ՝ ներկայանում է «Փոխկադակցված» նախագծով: Ցուցադրվող առօրինակներում դատնում է, թե խմելու ջուրն ինչպես է սղառողին հասնում և ես վերադառնում՝ Տոռոնտո ֆաղափում:

Ձեռնարկը կազմակերպել էր Հայաստանի Թեմիայան Մշակութային Միությունը: Ցուցահանդեսը բաց կլինի մինչև սեպտեմբերի 28-ը:

⇒ 5 Ես ինձ այլ կերպ եմ զգում Հայաստանում: Շվեդիայում աղբերու առաջին օրերից սկսած՝ մախընտրում էի զբաղվել հենց Հայաստանի հետ կապված առօրինակով: Շվեդ զբոսաշրջիկներ էի բերում ԽՍՀՄ, եթե այդ ցուցակում լինում էր Հայաստանը և Երեւանը: 1988-ի երկրաշարժից հետո Շվեդական Կարմիր խաչի նկարահանող խմբի հետ այցելեցի Հայաստան՝ նկարահանելու Մոխակի, Գյումրիի ավերակները, մարդկանց վիճակը, հասկանալու, թե ինչպես է հասնում հումանիտար օգնությունը: Այնուհետև մի ֆանի տարի առօրինակի

Լաուրա Դաուն Մինասյան...

Եվդ սոցիոլոգների խմբի հետ, որը Լոնդոնում դատնատնում էր սոցիալական առօրինակներ:

Մի անգամ կարդացի Եվդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնի մասին, որն առօրինակ էր հայ երեխաների հետ Մուլի որքանոցում Հայոց ցեղատղանության տարիներին: Սկսեցի հավաքել տեղեկություններ նրա մասին և Եվդեմի սարսափների մասին նրա հիշողությունները թարգմանեցի ռուսերեն: Դանից հետո զբաղվեցի Շվեդիայի արխիվներում ու

զրադարաններում Հայոց ցեղատղանության վերաբերյալ այլ նյութեր փնտրելու մղատակով: Գտա այդ ժամանակների բազմաթիվ փաստաթղթեր, ինչպես նաև այլ միսիոներների ու հայ փախսականների հուշեր, որոնք նույնպես թարգմանեցի Հայոց ցեղատղանության թանգարան-ինստիտուտի համար:

Ինձ միտ հուզել են Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները: Սիրում եմ այցելել Հայաստան և տարվա մի ֆանի ամիսն աղբերել հայկա-

կան կյանքով: Սիրում եմ դիտել, թե ինչպես է փոխվում հայ հանրությունը, երիտասարդությունը, հասկալով աղջիկները:

Ես կաղ չունեմ այն ֆաղափի հետ, որտեղ ծնվել ու մեծացել եմ: Դորոցն առօրինակում հետո և այնտեղից հեռանալուց ի վեր երբեք կարոտ չեմ զգացել: Իսկ այն բանից հետո, երբ այդ վայրագները ոչնչացրին հայկական գերեզմանատները, մորս գերեզմանը, Բաբուն ինձ համար անիծյալ ֆաղափ է: Ամաչում եմ, որ իմ անձնագրում նշված է որդես ծննդաղայր: Դա խառան է ողջ կյանքիս համար...

Իմաստաբանական բառարան Պատերազմը՝ պաշտպանական գործողություն

Երկրորդ աշխարհամարտից առաջ, նույնիսկ ավելի վաղ ժամանակներում, զինված ուժերի հարցերով զբաղվող գերատեսչությունները բոլոր երկրներում կոչվել են «դաշտերազմի մախարարություններ»:

Հետագայում, խաղաղասիրության նկատմամբ վերաբերմունքն ընդգծելու համար, այդ գերատեսչությունները կոչվեցին **Պաշտպանության մախարարություններ**:

Մամուլից ժողովրդացանք, որ **Դոնալդ Թրամփի** հրամանագրով ԱՄՆ Պաշտպանության մախարարությունը հետախույզ կոչվելու է **Պաշտպանության մախարարություն**: Սոցիալական համար դաշտերազմվելը մի քանակ վիրավորական էր եւ բովանդակությամբ չհամադասասխանող գործողություն: Հենց այդ կուռ սրամաքանությունից ելնելով էլ ստորագրվել է նման հրամանագիր:

Աշխարհի ամենահզոր բանակն ու հարուստ ռազմարդյունաբերություն ունեցող երկիրը ինչո՞ւ դիմում էր դաշտերազմության մեջ դնել «դաշտերազմական բանակ» բառակապակցությունը: Դրանում նույնպես առկա է կուռ սրամաքանություն:

Գրեթե նույն ժամանակահատվածում, Հայաստանում էլ առաջարկվեց «մարտունակ բանակի» փոխարեն շրջանառության մեջ դնել «դաշտերազմական բանակ» բառակապակցությունը: Դրանում նույնպես առկա է կուռ սրամաքանություն:

Ի դեպ, Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետության համադասասխան գերատեսչությունը հենց սկզբից կոչվեց **Պաշտպանության մախարարություն**, բայց սխալ չէր լինի, եթե Հայաստանում այդ գերատեսչությունը նույնպես կոչվեր **Պաշտպանության մախարարություն**, քանի որ իրանական աղբյուրից փոխառված **դաշտերազմ** բառը նշանակում է «դաշտերազմավոր կողմի հանդիմական գրոհ՝ հակահարձակում», հետեւաբար նաեւ՝ **դաշտերազմություն**:

Պաշտպան այն է, որ **դաշտերազմ** բառը դաշտերազմական *patrazm* հոմանիշից է, որը կազմված է *pat* եւ *razm* բաղադրիչներից: *Pat* նշանակում է «ընդդեմ», «ի հակադրություն», «հակա» եւ այլն, իսկ *razm*-ը համարժեք է հայերեն **ռազմ** բառին:

Այլ օրինակներ եւս. իրանական աղբյուրից փոխառված հայերեն **դաշտերազմ** բառը նույնպես կազմված է *pat* բաղադրիչի օգնությամբ, որը բառացի նշանակում է «հակընդդեմ»: Պարսկերենում *pad* բաղադրիչով կա նաեւ **pad-zahr**՝ «հակաթույն» բառը: Նույնը կարելի է ասել իրանական աղբյուրից փոխառված հայերեն **դաշտասխան** բառի մասին, որի կազմության մեջ ընդ է գտնվում *pat* բաղադրիչը: Պարսկերեն *pad-ava* նշանակում է արձագանք՝ ձայնի հակադարձում, իսկ *pad-avard* եւ *padafand* բառերը, որոնց բաղադրիչն է *pad* արմատը, դարձյալ նշանակում են **դաշտերազմություն**:

Փաստորեն, հայերեն **դաշտերազմ** բառը մախարաքան նշանակել է **դաշտերազմություն**: Տեսնում ե՞ք նույնիսկ Նորին Մեծություն Լեզվաբանությունն է վկայում հայերի խաղաղասիրական հոգեկերտվածի մասին:

Գ. ԱՄԵՐԵՆՅԱՆ

Նորա Արմանիի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը



Հոկտեմբերի սկզբին Հայաստանի կինոգործիչների միության (Կինոյի ՏՈՒՆ) մեծ դահլիճում կկայանա Նյու Յորքում բնակվող եւ ստեղծագործող, Փարիզում, Երեւանում եւ այլուր կինո եւ թատերական բազմաթիվ հետաքրքիր մախարածեր իրականացնող թատրոնի եւ կինոյի հայտնի դերասանուհի, ռեժիսոր, լուսնային **Նորա Արմանիի** ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը՝ դերասանուհու ներկայությամբ: Նորա Արմանին ամռանը մասնավոր հրավերով ներկա է գտնվել Երեւանյան «Ոսկե ծիրան» կինոփառատոնին, որտեղ արժանացել է Հայաստանի

Կինոգործիչների Միության Պրոֆեսիոնալ գիղիկների դերասանական մրցանակին:

Նորա Արմանիի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը Հայաստանի կինոգործիչների միությունում կներկայացվեն հետեւյալ օրերին՝ **Հոկտեմբեր 1-ին, ԺԱՍԸ 19:00-ին՝ Արա Երնջակյանի «Ժամկետը 7 օր»** ֆիլմը, որտեղ **Նորա Արմանին** հանդես է եկել **Անոս Ադամյանի, Մանանա Մելիքյանի** հետ:



Գլոբալիստական մտքումներ Նույն մտքից ու արյունից

Երբեմն մտածում եմ, թե որքան տարբեր է կյանքը մարդկանց համար: Թվում է, թե բոլորս էլ նույն մտքից ու արյունից ենք, բայց ինձ հանգիստ չի տալիս այն միտքը, որ մեր այժմեական կյանքը դարձ մի դաշտերազմականություն է՝ կախված նրանից, թե որտեղ եւ երբ ենք լույս աշխարհ գալիս:

Աշխարհի մյուս ծայրում ապրում է երեւի ինձ նման մի աղջիկ՝ նույն գիտելիքներով, դաշտերազմականությամբ եւ երազանքներով: Տարբերությունը միայն այն է, որ նա դաշտերազմ չի ունեցել նույն հաջողությունը, ինչ ես: Հնարավոր է, նա ապրում է մի հասարակությունում, որտեղ կանայք անգամ ձայնի եւ ընտրության իրավունք չունեն: Կամ միգրացիոն, դաշտերազմ է դաշտառ դարձել, որ նա ժամանակ չի գտնում մտածելու եւ գործելու սեփական անձի համար, այլ միայն գոյատևելու:

Չարմանում եմ, թե ոնց ենք աշխարհում այս վիճակին հասցրել: Մարդիկ բաժանված են իրարից մի հորինված, գոյություն չունեցող սահմաններով: Բաժանված են ուրիշների դարձ ու անփոփոխ որոշումով, թե եւ սա նրանց տունն է հավասարադրել:

Երբ հարազատներս ասում են, որ ինձ զսնելու համար օտար երկիր եմ ուզում մեկնել, ինձ հարազատ են: Երբ ձգտում եմ ուղղակի ծանփորդել, ինձ օտարանում են անվանում: Երբ ուզում եմ անգամ թեմանու երկիրը տեսնել, դավաճան եմ անվանում: Սակայն կա մի դարձ ձեռնարկություն, ես ուր էլ, որ լինեմ այս երկիր մոլորակի վրա, ես տանում եմ:

Ինչո՞ւ էիսի հաջողություն...

Նույն մտքից ու արյունից ենք կարծես, բայց չենք արժեւորում դիմացինի կյանքը, միայն մերը: Ցածր ենք դասում ախր նույն միտք ու արյունը եւ նույնքան վեր հանում ինքներս մեզ: Տարանջատում ենք մեզ մաշկի գույնով, լեզ-



վով եւ բնականության վայրով: Լավ կլինեք, եթե միայն տարանջատեինք: Մենք ախր դատում ենք այս դարձագույն տարանջատումներով:

Ինչո՞ւ էիսի կասկածներություն...

Հաջողակ է իրեն համարում սոցիալականը՝ իրեն վեր դասելով սեփական:

Բայց միթե ցամաքը նրա համար էր, որ նրա շուրջը սահմաններ գծվեին: Միթե մարդիկ այսօր տարբեր էին, որ դաշտերազմ դաշտերազմություն էր, թե միգրացիոն հաջողություն...

Չգիտեմ...

Սակայն գիտեմ, որ ապրում եմ միայն ու միայն հենվելով դաշտերազմականություն կոչված այդ հաջողության հույսին: Զ՞ե որ ծնվում եմ ի սկզբանե անհավասար դաշտերազմում:

Հոկտեմբեր 2-ին, ԺԱՍԸ 19:00-ին՝ Հարություն Խաչատրյանի «Վերջին կայարան», որտեղ Նորա Արմանին հանդես է եկել Արմեն Զիգարյանյանի եւ Ժիրայր Բաբաջանի հետ:

Հոկտեմբեր 3-ին, ԺԱՍԸ 19:00-ին՝ Ռաֆա Ռինեկանգասի՝ Ֆինլանդիայի եւ Իսպանիայի համատեղ արտադրության «Վերջին ցանկություն» (The Last Wish) ֆիլմը, որտեղ Նորա Արմանիի հետ հանդես են եկել դերասաններ Էրիկ Ֆրանսեսը, Վալ Վալենտին Մարտին Կաբելոն, Սերխիո Գարսիա Էռնանդեսը: Մոտեմ ազատ է:

րում: Ապրում եմ նույնպես անհավասար դաշտերազմում, վայրում, ժամանակաշրջանում: Միայն մեռնելուց ենք հավասար մեռնում՝ արժանապատիվ նույն վերջաբանին:

Այսօր, կարող եմ ասել, որ դաշտերազմականություն է մեր կյանքում այս աշխարհում: Ծրագրված բարձր եւ խորհրդավոր, որի ամեն աստիճանին տարբեր մարդիկ են կանգնած, միշտ մեկը մյուսից վերել, որ սակայն տանում է միայն մեկ հասցեով...

ԱՄԵՐԵՆՅԱՆ ԱՄԵՐԵՆՅԱՆ
Ռազմադրություն

Կորել է

Գյուլ Զովունու տարածում Լուսինե Վանիկի Մարտիրոսյանին Երեւանի Ինֆորմատիկայի Պետական Զուլեջի կողմից 2007 թ.-ին սրված դիմումը:

Համարել անվավեր:

«ԱԶԳ» ՀԱՐԱԹԱԹԵՐԹ
Հրատարակության ԼՂ տարի
Հրատարակիչ

«ՎԱՅՆ ԹԵԶԵՅԱՆ»
սոցիալ-մշակութային հիմնադրամ

Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԵՏԻՔԵԱՆ
Հրատարակություն (գովազդ)
հեռ. **010 582960**

Համակարգչային ծառայություն
«Ազգ» թերթի

Թերթի միջոցով ամբողջական թե մասնակի արտատրությունները տարածվում են մասնագիտացված տարածքներում կամ համացանցով, առանց խմբագրության գրառում համաձայնության խափարգելում են համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի:

Նիւթերը չեն գրախօսում ու չեն վերադարձում:
Գ-տարածք յոթնամյակից գովազդային են, որոնց բովանդակությունն համար խմբագրությունը դաշտերազմականություն չի կրում:
«AZG» Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960